

զանելոյ նախահօրն մեր՝ առաջին մարդոյն: Եւ ես նպատակ նմա եւ նա՝ ինձ, որով եւ զմեզ եւս ի նոյն քարչեալ սպասէ անկարծ ժամու ըստ Տեառն հրամանի եւ ըստ ասից Սորենացւոյն: Եւ զի յոյս տեսանելի՝ չէ՛ յոյս, ըստ քարոզութեան առաքելոյն, ի հանդերձեալն յուսամք առ յոյսն ամենեցուն խոստացեալ բարիսն եւ այն՝ յաւիտենական, յորժամ նորոգեսցէ զհողացեալս ի փառս իւր ըստ իւրաքանչիւր գործոց վարձս եւ ըստ ուխտին՝ թէ յՍատուած եւ յիս հաւատացէք, ի տան Հօր իմոյ օթեւանք բազում են: Եւ վերոյ գրեալն Պալլքլի լցան լուրք իրրեւ ճեմարանի լսարանի, ուր ամբօսք զմեօք պատեալք՝ ոչ միայն ազգք մեր, ոչ միայն ի վերայ բարձանց վարդապետաց եւ կաթողիկոսին գերեզմանի բարձրացան, այլ եւ ի ծառս ելին ի լուր նորոգ բանից բողոքից, ողբոց եւ ներբողենից, յԱգամայ սկսեալ՝ յԱրիլէ, Յակոբայ, Հեզեայ, յԱբխուզումէ, ի Բրիամուսէ, ի հնոց եւ ի նորոց ճապաղեալ սփռեալ յունկն եւ ի սիրտ ժողովոյն: Կինչեւ ցայսօր ի մեծամեծ յաւուրս՝ ըստ կարի գեգերեալ անձինս թալկացելոյ, երես ի քաշ գաւազանաւ եւ ծովով ժամանեալ անդ՝ ի վայրն ողբարանաց եւ աշխարանաց, գուժի եւ լալականաց: Արդ չափեա՛ զայս՝ թէ քանի՛ցս եթէ հոգի մեր շաղկապեալ իցէ ի մարմին մեր՝ փութայ զիւրոյ իզձն կատարել որով եւ իւրք իցէ բարք իւր եւ սէվտայ: Եւ մեծութիւնդ եթէ միսիթարել կամ իցիս զսիրելին քո՝ ա՛յս եւեթ՝) սփոփանք ընտրեա՛, զոր եւ կարիցես՝ եթէ կամիս: Նախ զպատմագիրն Աջպան Տիւանէին, զի յանուն քո առաքեալ յիշատակն ի մէնջ պիտանին ծաղկաքաղեսցի եւ նորա եւս լիցի յիշատակ. լաւ մտածեա՛: Եւ վասն մեծութեանդ ե՛ւ նահապետ կա-

1) եւեթէ.